
ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳՈՒՍՏԱՎՈ ԱԴՈԼՖՈ ԲԵԿԿԵՐԻ «ԱՄՊԵՐԻ ՀՅՈՒՐ» ՊԱՏԿԵՐ- ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՌԱՖԱՅԵԼ ԱԼԲԵՐՏԻ «ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՄԵՋ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐԱՂՅԱՆ

1850-ական թվականների վերջին իսպանացի ռոմանտիկ Գուստավո Ադոլֆո Բեկկերը «Հանգեր» ժողովածուի LXXV բանաստեղծության մեջ գրում է.

«Ճի՛շտ է արդյոք, որ երբ մեր աչքերին
Երազն է վարդ իր մատներով դիպչում,
Այդժամ հոգին իր բնական բանտից
Հապճեպ մի թռիչքով դուրս է փախչում:
Ճի՛շտ է արդյոք, որ հյուրը ամպերի՝
Գիշերային մեղմիկ հովին հլու,
Թևավորված, ելնում է ամայի
Ոլորտը՝ մյուսներին հանդիպելու»¹:

«Ամպերի հյուր» փոխաբերությամբ արտահայտված, երազատեսի վիճակն ապրող հոգու բեկկերյան նկարագիրը 20-րդ դարի բանաստեղծական մեկնաբանության առաջին նախահիմքն է իսպանալեզու պոեզիայում, քանի որ ընդհուպ մոտենում է ենթագիտակցականը պատկերելու սյուրռեալիստական փորձերին: Բանաստեղծական ժողովածուի «Սիմֆոնիկ» կոչվող ներածության մեջ Բեկկերը ներկայացնում է ենթագիտակցական շերտի իր գուշակած ներկայությունը և դրան բանաստեղծական մարմնավորում տալու ձգտումը: Հուզաշխարհի խիստ անձնական դրսևորում ներկայացնող այս ներածությունը «Սիմֆոնիկ» է կոչվում ոչ միայն գրքի ընդգծված երաժշտականության շնորհիվ, այլև այն կարևոր պատճառով, որ սիմֆոնիա բառով արտահայտվում է տարբեր ծագում ունեցող հարմոնիաների ելևէջումը, որոնք խորհրդանշում են

¹ **Gustavo Adolfo Bécquer**, “Rimas”. Barcelona: Ediciones Cátedra, 2011, p. 163. Այստեղ և հետայսու թարգմանություններն իմն են (< Ա.):

հեղինակի՝ հոգեբանական տարբեր շերտեր պատկերելու միտումը: «Ուղեղիս սովորապատ անկյուններում, կուչ եկած ու մերկ, քնում են իմ երևակայության արտասովոր զավակները՝ սպասելով լռության մեջ, որ արվեստը հագցնի դրանց բառերով»²: Ըստ Բեկկերի՝ դրանք ծնվում են անքնության և երևակայության ազդեցությամբ: «Գիտությանն անհայտ՝ դրանք են իմ ոգևորությունների և ընկճվածությունների պատճառը»³: Բանաստեղծն ընդգծում է ենթագիտակցական ու գիտակցական ոլորտները տարանջատելու բարդությունը: «Ինձ համար դժվար է իմանալ, թե ինչ եմ երազել, և ինչ է ինձ պատահել. իմ մտերիմները բաժանված են երևակայության ուրվականների և իրական անձանց միջև»⁴: Մեջբերված LXXV հանգի վերջում, սակայն, կասկածը հետզհետե համոզմունք է դառնում.

«Տեսիլքների աշխարհն այդ, չգիտեմ,
դուրս է արդյոք մեզնից, թե մեր ներսում.
գիտեմ սակայն, որ ես ինձ անծանոթ
բազում մարդկանց եմ ճանաչում»⁵:

«Ամպերի հյուր» երազատես հոգին, այսինքն՝ ենթագիտակցությունը, գիտակցված իրականությունից տարբերվող զուգահեռ իրականություն է ստեղծում. Բեկկերն այս միջոցով մոտենում է այն գաղափարին, որ հենց ենթագիտակցությունն է պատասխանատու ստեղծագործ երևակայության համար: Պատահական չէ, որ Բեկկերի ազդեցությունը և հատկապես մեջբերված հանգի հանդեպ հետաքրքրությունը խիստ բնորոշ էր իսպանական 27-ի սերնդի բանաստեղծներին, որոնց պոեզիայի մեջ կարևորագույն դեր են խաղում սյուրռեալիստական պատկերները: «27-ի սերունդ» եզրն առաջին անգամ կիրառել է Դամասո Ալոնսոն 1948-ին: Հատկանշական է, որ հենց Դամասո Ալոնսոն բազմիցս ընդգծել է Բեկկերի արդիականությունը՝ վերջինիս անվանելով «27-ի սերնդի առաջին ժամանակակիցը»⁶: Սերնդի գլխավոր ներկայացուցիչներին (Պ. Սալինաս, Ֆ. Գարսիա Լորկա, Ռ. Ալբերտի, Դ. Ալոնսո, Վ. Ալեյքսանդրե, Լ. Սերնուդա և այլք) համախմբում է 1927 թվականին Սևիլիայում ականավոր բանաստեղծ Լուիս դե Գոնգորայի մահվան երեքհարյուրամյա տարելիցին նվիրված միջոցառումը: Այս սերնդի գրականության մեջ լայն տարածում է

² Նույն տեղում, էջ 105:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 107:

⁵ Նույն տեղում, էջ 164:

⁶ **Dámaso Alonso**, “Poetas españoles contemporáneos”. Madrid: Gredos, 1965, p. 9.

գտնում սյուրռեալիզմը, որը կենտրոնանում է ենթագիտակցական, իռացիոնալ երևույթների վրա: Սյուրռեալիստները կիրառում են հոգեվերլուծության և ազատ զուգորդման մեթոդները, ներկայացնում են զուտ ենթագիտակցական աշխարհը, ուստի մեծագույն նշանակություն են ձեռք բերում փոխաբերությունները, երազային տարրերը, տեսիլքների հուզված և թախծոտ տրամադրությունը: Այսպիսով, եթե Բեկկերին նախորդած իսպանալեզու քնարերգությանը «քնորոշ չէր թափանցել հոգու անդունդները՝ քննելով հոգեբանական առեղծվածներն ու հետո տանջելով միտքը՝ ամենագուսպ, ամենաճշգրիտ և դիպուկ բառը կամ արտահայտությունը գտնելու համար»⁷, ապա ռոմանտիկ բանաստեղծն իսպանական գրականության մեջ «հոգու անդունդների» առաջին քննիչն է դառնում: Բեկկերի այս առանձնահատկությունը 20-րդ դարում հատկապես զարգացնում է Ռաֆայել Ալբերտին: Ուշագրավ է, որ Բեկկերի ուժեղ ազդեցությունը նկատվում է Ալբերտիի ամենասյուրռեալիստական՝ «Հրեշտակների մասին» ժողովածուի մեջ: Ժողովածուի քնարական հերոսը կորցրել է ներքին խաղաղության դրախտը, որի հետևանքով առաջ է գալիս թախծի և կարոտի ներքին դրաման. նրան պաշարած արտաքին ուժերը նույնացվում են հրեշտակների հետ. դրանք հերթով կամ ճնշում ու սպառնում, կամ հույսի նշույլ են ներշնչում: Ալբերտին, ինչպես ժամանակին Բեկկերը, արտառոց ճշգրտությամբ նկարագրում է հոգու մութ շարժումները: «Կորույսյալ ծառուղին» ինքնակենսագրական գրքում Ալբերտին խոսում է այս բանաստեղծական ժողովածուի ստեղծման ժամանակաշրջանի մասին: «Ես մեկուսացել էի ամեն ինչից (....) Ես՝ ամպերի հյուրս, սկսեցի խաբխափելով գրել, առանց լույսը վառելու, գիշերվա ամեն պատահած ժամի»⁸: «Ամպերի հյուրը» արտահայտությունը, ինչպես նաև ժողովածուի «Երեք հուշ երկնքից» շարքը հարգանքի տուրք են Բեկկերին, ում բանաստեղծություններից են վերցրած շարքի երեք դրվագի խորագրերը: Սակայն դրանից զատ՝ այս շարքը թեմատիկ կապ է ռոմանտիկ բանաստեղծի ստեղծագործության հետ: Մյուս կողմից «Հրեշտակների մասին» ժողովածուի և բեկկերյան «Հանգերի» զուգահեռները շատ ավելի խորն են և բնավ չեն սահմանափակվում «Երեք հուշ երկնքից» շարքով: «Բարի հրեշտակը» բանաստեղծության մեջ, ինչպես Բեկկերի VII հանգում, աստվածաշնչյան Ղազարոսի հարության տեսարանն է արտացոլված, նոր կյանքի հույսը, փրկության հնարավորությունը: Ալբերտիի «Մարտական հրեշտակների»՝ փոթորկին մատնված աշտարակը (Քամի՝ քամու դեմ / Ես՝ անդեկ մի

⁷ P. Restituto del Valle Ruiz, Estudios literarios. Barcelona: Juan Gill Editor, 1903, pp. 107-108.

⁸ **Rafael Alberti**, “La arboleda perdida”. Barcelona: Editorial Seix Barral, 1976, p. 265.

աշտարակ, վախի մեջ»⁹) հայտնվում է նաև Բեկկերի XLI հանգում («Դու փոթորիկն էիր, ես՝ բարձր / մի աշտարակ՝ դրա հզորության դեմ»¹⁰): Ուշագրավ է, որ Ալբերտիի հրեշտակները ոչ թե բարի կամ չար հրեշտակներ են, այլ խորհրդավոր հոգեբանական ուժեր, որոնք իմաստավորում են մարդկային հուզաշխարհն ու ապրումները: Ալբերտին, ինչպես Բեկկերը, խորհրդանիշների միջոցով է փորձում մարմնավորել ներքին եսը. այս դեպքում, սակայն, «ամպերի հյուրի» փոխարեն ընտրված են ամպերի «բնակիչ» հրեշտակները: «Կորուսյալ դրախտը» բանաստեղծության մեջ արտահայտված են ոգեգրկության, ընկճվածության, գալիքի հանդեպ հավատի կորստի զգացումները. «Մեռած հրեշտակս հսկում է»¹¹: Սակայն «հսկում է» ներգործական բայը ցույց է տալիս, որ հրեշտակի մահը քնի իմաստ ունի և հարության հույս է ենթադրում. «Մեռած հրեշտակ, արթնացի՛ր»¹²: Կորուսյալ դրախտի որոնման ճանապարհին բանաստեղծը ստվերին է դիմում՝ ամպերի, դրախտի նախագո բնակչին.

«Ո՛ր կողմում է դրախտը, ստվե՛ր,
դու՛, որ եղել ես այնտեղ:
Հարց և լռություն:
Մարդիկ՝ հաստատված շիրիմների կանգուն ափին:
Քարացած երգեր»¹³:

Մեջբերված հատվածում եռակի ընդգծված է էլիոթյան «սնամեջ» մարդկանց անշարժությունը՝ որպես անկենդանության նշան. անշարժ են մարդիկ, շիրիմները, անգամ երգերն են քարացած: «Ամպերի հյուրը» նոր իմաստ է ստանում՝ բառախաղի միջոցով փոխարինվելով «խավարի հյուր» բառակապակցությամբ (nieblas – tinieblas): Իր հոգին «խավարի հյուր» անվանելով, սակայն, բանաստեղծն ընդգծում է հյուր, այլ ոչ թե բնակիչ լինելու հանգամանքը: Ստվերների դրախտից հայտնված հոգին հյուր է խավարի աշխարհում, անձանոթ է, օտարական.

«Աշխարհիկ այս հագուստով
թներս չեն երևում:
Ով եմ՝ չգիտի ոչ ոք:

⁹ **Rafael Alberti**, *Marinero en Tierra, Sobre los Angeles*. Barcelona: Ediciones Orbis, 1982, p. 125.

¹⁰ **Gustavo Adolfo Bécquer**, *Rimas*. Barcelona: Ediciones Cátedra, 2011, p. 139.

¹¹ **Rafael Alberti**, *Marinero en Tierra, Sobre los Angeles*. Barcelona: Ediciones Orbis, 1982, p. 109.

¹² Նույն տեղում, էջ 110:

¹³ Նույն տեղում:

Ինձ չեն ճանաչում»¹⁴:

Ընդ որում՝ կարևոր է թների մոտիվը, որը մատնում է հյուրի օտարությունը, դրախտային ծագումը: Լորկայի «Հինգ տարի հետո» պիեսում թների հիշատակությունը նույնպես կապվում է հոգու ծննդավայր վերադարձի հետ.

«Թներս ինձ կանչում են.

գնում եմ, թողե՛ք:

Ուզում եմ մահանալ՝ որպես ծեզ,

ուզում եմ մահանալ՝ որպես երեկ»¹⁵:

Թները խորհրդանշում են հրեշտակային անցյալը, նաև մահը՝ սակայն ծնունդին նախորդած անգոյություն վերադառնալու իմաստով: Այս առումով դրանք դառնում են նոր կյանքի առհավատյալ: Իսկ թների կորուստը տկարության, անելանելիության նշան է. միակ հույսը՝ հրեշտակը, ինքը օգնության կարիք ունի.

«Բոլոր հրեշտակները կորցրել են կյանքը՝

Բացի մեկից՝ վիրավոր, թևակոտոր»¹⁶:

Այս պայմաններում Ալբերտիի քնարական հերոսը աստիճանաբար տարրալուծվում է, նախ՝ հոգևոր մակարդակում. «Խավարի հյուրը» բանաստեղծության մեջ հոգին «անբնակ» է անվանվում, անպաշտպան «չար հրեշտակների» դեմ.

«Չա՞ր, թե՞ բարի հրեշտակները, ես չգիտեմ,

իմ հոգու մեջ են քեզ նետել:

Մենակ՝ առանց կահույք, առանց սենյակ

և անբնակ: (...)

Ո՞ր չար, դաժան հրեշտակներն են

ուզում նորից վարձակալել այն»¹⁷:

Դատարկման հետևյալ մակարդակը մարմնականն է.

«Ես պոկեցի քեզ իմ մարմնից,

ես՝ քարածխով մի տաք.

- Գնա՛»¹⁸:

¹⁴ Նույն տեղում, էջ 116:

¹⁵ **Federico García Lorca**, Así que pasen cinco años. En “Teatro completo”. Barcelona: Galaxia Gutenberg, S. L., 2012, p. 317.

¹⁶ **Rafael Alberti**, Mariner en Tierra, Sobre los Angeles, p. 176.

¹⁷ Նույն տեղում, էջ 115:

¹⁸ Նույն տեղում, էջ 117:

Այժմ մարմինը նույնպես անբնակ է մնում. հոգևոր մոռացմանը հաջորդում է ֆիզիկական հիշողության ջնջումը, որից հետո մնում է դատարկ հագուստը.

«Մնաց մարմինս դատարկ՝
պատուհանին սև պարկ»¹⁹:

Անմարմին էակն արտացոլանք չունի. «Լույսը նրան չի տեսնում, ոչ էլ քամին, ոչ էլ ապակիները»²⁰: Անբնակ մարմնով և հոգով՝ մարդը դառնում է «քայլող մեռյալ»: Ալբերտին հանգում է նույն պատկերին, որ օգտագործում էր Բեկկերը XLVI հանգում («Մեռյալը ոտքի վրա է»²¹), և կոչ է անում ստվերին վերածնվել՝ որպես Քրիստոսի զոհաբերությունից հետո 20 դարի ընթացքում մարդկության կորցրած ոգի.

«Ստվե՛ր, քեզ օդ եմ հրավիրում:
Քսա՛ն դարի ստվեր,
ստվե՛ր, որ քարանձավիցդ երբեք չես ելնում,
անլու՛յս ստվեր,
քսա՛ն շիրմի խորության հանքափոր»²²:

Ժողովածուի վերջին բանաստեղծություններում ավելի է սաստկանում հուսահատության զգացումը՝ հասնելով տիեզերական մասշտաբի. «Լուսինը սառչում է նայվելուց»²³: Ավելի ուշ Արգենտինայում էտրիսե Լուիս Բորխեսը գրում է. «Գիշերների լուսինը այն լուսինը չէ,

որը տեսել է առաջին Ադամը:
Մարդու անքնության երկար դարերը
Մի հին լացով են այն ծածկել. նայի՛ր նրան»²⁴:

Ալբերտիի գրքում մարդկային հուսահատությունը վարակում է ոչ միայն երկնային մարմինները, այլև բնության երևույթները.

«Մարդու վերջին ձայնն արյունոտեց քամին»²⁵:

Ալբերտին և իր սերնդակից մյուս պոետեալիստները փորձում են գրական հնարքների միջոցով թափանցել ենթագիտակցության շերտերը, որոնք Բեկկերը դեռ 19-րդ դարում գուշակել և անընկալելի էր անվանել, գիտակ-

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում, էջ 120:

²¹ **Gustavo Adolfo Bécquer**, Rimas. Barcelona: Cátedra, 2011, p. 142.

²² **Rafael Alberti**, *Marinero en Tierra, Sobre los Angeles*, p. 128.

²³ Նույն տեղում, էջ 170:

²⁴ **Jorge Luis Borges**, *Obras completas*, T. III. Barcelona: Emecé Editores, 1999, p. 138.

²⁵ **Rafael Alberti**, *Marinero en Tierra, Sobre los Angeles*, p. 176.

ցությամբ անփոխանցելի: Ռոմանտիկ բանաստեղծն ընդհուպ մոտեցել էր սյուրռեալիզմի առարկային, սակայն չէր կատարել այն գրական ստեղծագործությամբ մարմնավորելու քայլը: «Եթե Բեկկերը շարունակեր երազի և երևակայության ուժգնացման այս ճանապարհը, անշուշտ, կհասներ հերմետիզմին և այն խորքերին, որոնց հասել էին սյուրռեալիստները: Այդուհանդերձ, սկիզբիցի բանաստեղծը կանգ է առնում ինքնախորասուզման և նոր, երազային իրականության ստեղծման ընթացքում՝ մնալով շեմին»²⁶:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածն անդրադառնում է Գ. Ա. Բեկկերի պոեզիայում ենթագիտակցության դրսևորմանը և դրա ազդեցությանը Ռաֆայել Ալբերտիի «Հրեշտակների մասին» ժողովածուի վրա: Ալբերտին և իր սերնդակից մյուս սյուրռեալիստները փորձում են գրական հնարքների միջոցով թափանցել ենթագիտակցության այն շերտերը, որոնք Բեկկերը դեռ 19-րդ դարում գուշակել և գիտակցությամբ անփոխանցելի էր անվանել: Ռոմանտիկ բանաստեղծն ընդհուպ մոտեցել էր սյուրռեալիզմի առարկային:

Բանալի բառեր - ռոմանտիզմ, «Հանգեր», «ամպերի հյուր», ենթագիտակցություն, 27-ի սերունդ, սյուրռեալիզմ:

БЕККЕРОВСКИЙ ОБРАЗ-КОНЦЕПЦИЯ “ГОСТЬ НЕБЕС” В СБОРНИКЕ “ОБ АНГЕЛАХ” РАФАЭЛЯ АЛЬБЕРТИ

АСМИК АМИРАГЯН

Статья посвящена проявлению подсознания в поэзии Г. А. Беккера и его влиянию на книгу “Об ангелах” Рафаэля Альберти. Вместе с другими сюрреалистами-современниками Альберти пытается художественно изобразить те пласты подсознания, которые Беккер называл “непередаваемыми посредством разума”, таким образом приблизившись к предмету сюрреализма.

Ключевые слова - романтизм, “Рифмы”, “Гость небес”, подсознание, поколение 27, сюрреализм.

²⁶ **José M^a González-Serna Sánchez**, Bécquer: Teoría Poética y conexiones con la modernidad. En: G. A. Bécquer, “La Poesía”. Cantabria: Aula de Letras, 2002, p. 119.

GUSTAVO ADOLFO BECQUER'S IMAGE-CONCEPT OF GUEST OF MISTS IN RAFAEL ALBERTI'S "ABOUT THE ANGELS"

HASMIK AMIRAGHYAN

This article refers to the manifestation of the subconscious in Becquer's poetry and its impact on Rafael Alberti's collection of poems "About the Angels". Alongside with some surrealists of his generation, Alberti, in his poetry through different literary devices tries to present those subconscious layers that Becquer as early as in the 19th century had discovered and called "inexpressible with reason". In fact, the Romantic poet came close to the subject-matter of Surrealism.

Key words – Romanticism, "Rhymes", "guest of mists", the subconscious, Generation of '27, Surrealism.